նի, թե շահը ինձ որտեղի՞ց է ճանաչում, կասեք, թե գիշերը երազում է տեսել քեզ, դրա համար էլ կանչում է, որ իր մոտ գնաս: Մարդիկ գնացին, նրան գտան, ողջույն տվին և հարցրին. Դո՞ւ ես Ալլահվերդին: Նա ասում է, այո՛, ես եմ Ալլահվերդին: Նրանք հայտնում են շահի պատվերը: Շատ խոսելուց հետո, նրանց համար սեղան բացեց, իսկ ինքը հագավ դիպակե պատմուճանը և մեջքը կապեց թանկագին շալե գոտին և վարն հագավ սամույրե վերարկուն (մուշտակը), կապեց պողպատյա թուրը, գլխին փաթաթեց ոսկետուտ (ոսկեծայր) մանդիլը (շոր), հագավ ամրակոշիկները, ուսը գցեց հրացանը, հեծավ բոսորագույն ձին և առաջը գցեց իր սպասավորին և ելավ գնաց հրավիրակների հետ: Ճանապարհին մարդկանց հարցնում է, թե ի՞նչ է կամենում ինձնից շահը, գիտեմ, որպեսզի ինձ սպանի: Քանզի անցյալ օրերին մեր գյուղը մի զինվոր էր եկել, անպատշաճ բան էր արել, իսկ ես ծեծեցի նրան. նա գնացել գանգատվել է շահին, այդ պատճառով շահը պահանջել է ինձ սպանել: Բայց ես իմ թուրը կգցեմ իմ վիզը և կընկնեմ նրա ոտքերը, ինչ կամենում է անել, թող անի:

Իսկ մարդիկ նախապես մտան շահի մոտ և նրան ամեն ինչ պատմեցին: Շահը հրամայեց նրան բերել իր առջև: Երբ մտավ շահի մոտ և ողջույն տվեց, ճանաչեց, որ այն հյուրն էր, որին ապաստան տվեց ինքը: Շահն ասում է. «Բարով եկար, կավատ»: Ապա ասում է, եթե ազնիվ պատմուճան հագցնեմ, լա՞վ կլինի: Մարդը ասում է՝ լավ կլինի: Շահն ասում է իրո՞ք լավ կլինի, կավատ: Իսկ եթե քեզ թամբով ձի տամ, լա՞վ կլինի: Մարդը ասում է, լավ կլինի: Շահը ասում է, այո, լավ կլինի, կավատ: Իսկ եթե քեզ տամ խոհանոցներով տաղավարներ, լա՞վ կլինի, մարդը ասում է՝ լավ: Շահն ասում է, իրոք լավ կլինի, կավատ: Եթե քեզ Սիսես քաղաքի, որ Շիրազն[46] է, խանությունը տամ, ի՞նչ կլինի: Մարդը ասում է՝ ամենից ավելի շատ բարին դա է:

Ապա հրամայեց տալ այն ամենը, ինչ որ ասաց: Եվ գրեց հրամանագիր և Շիրազի խանությունը տվեց նրան: Այս այն Ալլահվերդին է, որը հիշատակում է Առաքել պատմագիրը Արծկեի[47] և Վանա պատերազմի մասին խոսելիս: Այս ստույգ այսպես է, ինչպես որ գրեցինք: Այս բանը լսեցինք Մուրադխան անունով մեկից, նաև սակավ բան՝ իմ մորից: Երբ Շահ Աբասը երկու անգամ (հայերին)

քշեց տարավ պարսից երկիրը, իմ մայրը իր հորով ու մորով բնակվեց Գուլփիքանում: Հետո քանաքեռցի Դավիթ-Մելիքը, որ Կոտայքի գավառապետն էր, նրանց բերեց բնակեցրեց իրենց Արծնի[48] գյուղում: Իմ տատ Խոսրովը քենին էր Մելիք Դավթի, որին ասում էին Մելիք թուրքչաբիլմազ (թուրքերեն չիմացող մելիք), իսկ իմ մայր Խանաղային կնության տվեց իր նոտար Մկրտիչին, որոնք սերեցին ինձ, որին այս պատմությունը պատմեց իմ մայրը:

ԳԼՈՒԽ ԺԲ
ՇԱՀ ԱԲԱՍ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բազմահնարամիտ և հանճարեղ Շահ Աբասը, երբ թագավոր դարձավ, նրա գործերը հաջող գնացին, քանի որ ինչ երկիր որ իր հոր ժամանակ կամ այլ ժամանակ գրավել էին, սա բազմաթիվ քաջագործություններով հետ գրավեց՝ պարսից երկրից էին Ջոջանեթը, որ Գիլանն է, Ղանդահարը, Հուրմուզը, Հրեն (Հերաթ)[49] և այլք: Ապա զորեղացավ օսմանցիների նկատմամբ: Քանզի ինչպես պատմում է Առաքել պատմագիրը, թե Ջալալի ավազակները, որոնց անունները գրել է, սրանք բազմացան Կոստանդնուպոլսից մինչև Երևան: Այդ պատճառով ուժեղացավ նաև շահը: Հավաքեց իր զորքերը, գնաց գրավեց բոլոր այն երկրները, որ օսմանցիք խլել էին պարսիկներից: Սրա համար մենք այստեղ շարադրեցինք. դրանք հետևյալներն են՝ Թավրիզ, Նախիջևան, Երևան, Տփխիս, Գորի, Կախեթ, Գանձակ, Շամախի, Բաղդադ և այլն՝ իրենց բոլոր գավառներով: Հետո օսմանցիք ոգևորվելով՝ միաբանվեցին նաև նրանք: Նրա դեմ ուղարկեցին զորավար Ջալալօղլի Սինան փաշային: Սրա ջարդի մասին պատմում է Առաքելը, սրա պատմությունից սովորեք, իսկ մենք չերկարացնենք: Նախքան Ջալալօղլու գալը ամբողջ երկիրը, ռամիկներին ու շինականներին (Շահ Աբասը) քշեց, տարավ Պարսկաստան: Թե նրանց, որոնց ինքն էր հնազանդեցրել, և թե նրանց, որոնց խաներն էին բերել այլ երկրից, բոլորին քշեց, տարավ Պարսկաստան: Սրա համար մենք կարևոր համարեցինք այստեղ շարադրել այն բոլոր երկրների մասին, որ նա ավերեց: Դրանք են ըստ անունների թե հետ, թե առաջ, իսկ դու